եղել, յատկապէս ԺԳ. դարի ընթացքում. տարաբաղդաբար, քիչ են մեր ձեռագրական տեղեկութիւնները, եղածներն էլ մի որոշ շրջանից միայն։ Վարդանի յիշատակութիւնը 1268 թուին և Յովսէփ վարդապետինը 1279 թուին, տեսանք վերև։ Աբել, Երեմիա և Գրիգոր վարդապետների գրական կամ վարժապետական գործունէութեան մասին տեղեկութիւն չունինք։ ԺԳ. դարից յետոյ մինչև ԺԵ. դարը չէ յաջողուել մեզ որևէ գրաւոր յիշատակարան գտնել. այս դարի հնագոյն յիշատակը մի խաղգիրք է, գրուած Գալուստ աբեղայի ձեռքով մանր բոլորգրով, մագաղաթի վերայ, $8^1/_2 \times 9^1/_2$ սմ. կաշեպատ կազմով, ՊՂԱ (= 1442) թուին, «ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ. Ստեփանոս նահատակիս և Թրի սբ. Նշանիս... յիշատակ Մխիթարի և Գալստի ծնաւղացն» (Ցաւել. Բ. 50)(*)։ Նոյն ՊՂԱ թուին նա գրել է մի Ճաշոց թղթի վերայ, լաւ բոլորգրով և երկսիւն, լուսանցքի և սկզբնազարդերով, մարդկային և կենդանական պատկերներով (եղջերու, 339բ.), միջակ կարողութեամբ, իւր յիշատակարանի մէջ համառօտ նկարագրելով Զհան շահի կոտորածը Շամշուլդայում. գրչութեան տեղը «ի գաւառիս Արարատեան ի ձորս Բեղոյ, ի վանքս Աղջոց, ընդհովանեաւ սբ. Աստծնիս և սբ. կաթուղիկէիս և սբ. Ստեփանոս նահատակիս և Թրի սբ. Նշանիս և Արամունից սբ. Խաչիս և Թեւատ սբ. Գրիգորիս և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ»։ Թերթ ընկած լինելու պատճառով վերջից, չէինք իմանալ Գրչի անունը, եթէ 219ա. չլինէր հետևեալ համառօտ յիշատակարանը. «Զբազմամեղ և զփծուն գրիչս զԳալուստ աղաչեմ յիշել ի տր. և դուք յիշեալ» (Ցաւել. Բ. 51. Ձեռ. Էջմ. № 903/939)։ Ապա Կ. Պոլսի Անտոնեանց հարց Ղե. համարը կրող աւետարանը գրուած է ՊՂԲ (= 1443) թուին «ի գաւառս Արարատեան ի ձորս Բեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ. Աստծնիս և սբ. Կաթուղիկէիս եւ սբ. Ստեփանոս նահատակիս և սբ. աջոյս, և Թրի սբ. Նշանիս և սբ. Խաչիս և Թեւատ սբ. Գրիգորիս և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ. ձեռամբ յոգնամեղ և անիմաստ գրչի Գալստի, անուամբ միայն աբեղայի և ոչ գործով»(*)։ Նոյն Գալուստ գրիչը գրել և նկարագարդել է մի ուրիշ աւետարան 1447 թուին, որի մասին յիշատակութիւն ունի Ալի-



Պատկեր 183.

(*) Ձեռ. Էջմ. № 690/769 (Կար. 677)։

(*) Արտագրել ենք անձամբ 1911 թուին, ժամանակի մատենադարանապետ, այժմ հանգուցեալ, Հ. Իսահակ Սրապեանի սիրալիր թոյլտուութեամբ։ Այս աջը յիշատակուած է և Վարդանի Աշխարհացոյցի մէջ. «Աղջոց վանք, ուր կայ ս. աջն Ստեփանոս քահանային և ս. աջն Թոտակէսի եւ որդոյն Գրիգորի ս. Լուսաւորչին». Թոփչեան, Յուցակ Ձեռագրաց Խաչիկ վարդ.ի, 1898, Վաղարշապատ, Ա. 77։ Նաև Գրիգոր Մակուեցու կոնդակի մէջ, Փիրղալէմեան, Նոտարք, 140։ Արիստակեսի աջն այժմ գտնւում է Էջմիածնում։ Նոյն աջի մասին տես և քիչ յետոյ։

(**) Այրարատ, 353/4։

(***) Փիրղալէմեան, Նոտարք, 170։